ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

24 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

24 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 19 անդամներ:

Բացակա էին՝ Անի Ազատյանը, Արտակ Աշիկյանը, Ռոբերտ Դերմոյանը, Վարդան Խաչատրյանը, Անդրանիկ Կիրակոսյանը, Արաքսյա Համբարձումյանը, Գարիկ Համբարձումյանը, Հովիկ Հովակիմյանը, Սոկրատ Հովսեփյանը, Կարեն Ղազարյանը, Արմեն Մարգարյանը, Արտավազդ Մարգարյանը, Գոռ Մարգարյանը, Իշխան Սահակյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Հրայր Հակոբջանյան, Սուրեն Մկրտչյան, Վարդան Հակոբյան, Լյովա Ավետյան, Խորեն Ուստյան, Ատոմ Ատոմյան, Միեր Գևորգյան, Արգամ Հովակիմյան, Գոհար Հովսեփյան, Մերի Մելիքյան, Արսեն Եփրեմյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Կառլեն Մկրտչյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գոռ Նազարյանը

Լսեցին
ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Արտաշատ համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 24-ի արտահերթ նիստի **օրակարգը՝**

1.1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 292-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 2-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Մ.ՄԵԼԻՔՅԱՆ/

1.2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Մ.ՄԵԼԻՔՅԱՆ/

1.3.ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՋՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՆՈՐՈԳՄԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԸ ՈՐՊԵՍ ԱՅԼ ՆԵՐԴՐՈՂ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա.ԵՓՐԵՄՅԱՆ/

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 4-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 292-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 2-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ և 38.1-ին հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու 2022թվականի դեկտեմբերի 28-ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 292-Ն որոշումը:

2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 11-ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 292-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N2-Ն որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օ րվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 5-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԵՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի 2023 թվականի բյուջեն.

1) Վարչական մասի եկամուտների գծով՝ 5077736,3 հազար դրամ, այդ թվում՝

ա.սեփական եկամուտներ՝ 1809829,4 հազար դրամ
բ.պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա՝ 3256027,0 հազար դրամ
գ.այլ ընթացիկ դրամաշնորհներ՝ 5882,9 հազար դրամ
դ.պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակվ ած լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետա կան բյուջեից ստացվող միջոցներ՝ 5997,0հազար դրամ

2) Ֆոնդային մասի եկամուտների գծով՝ 6565472,627 հազար դրամ,այդ թվում
ա.վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ՝ 120089,853.2 հազար դրամ
բ.ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ՝ 21048,774.2 հազար դրամ
գ.հողի օտարումից մուտքեր՝ 2355334,0 հազար դրամ
դ.այլ գույքի օտարումից մուտքեր՝1294000,0 հազար դրամ
ե.պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)՝ 1780000,0 հազար դրամ

զ.վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե՝ 995000,0 հազար դրամ

3) Ծախսերի գծով՝ 10648208,927 հազար դրամ:

2.Հաստատել համայնքի 2023 թվականի բյուջեի եկամուտները համաձայն հավելված 1-ի:

3.Հաստատել համայնքի 2023 թվականի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման համաձայն հավելված 2-ի և ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 3-ի:

4.Հաստատել համայնքի 2023 թվականի բյուջեի տարեվերջի միջոցների հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը) համաձայն հավելված 4-ի և համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները համաձայն հավելված 5-ի:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 6-Ն/

Լսեցին

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՆՈՐՈԳՄԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԸ ՈՐՊԵՍ ԱՅԼ ՆԵՐԴՐՈՂ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկակավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 13-րդ կետով, 18-րդ հոդվածի 42-րդ կետով և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Համաձայնություն տալ, որպեսզի համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի բաժնային սեփականության գույքի նորոգման, այդ թվում էներգախնայող միջոցների կիրառման նպատակով համայնքի 2022 թվականի սուբվենցիոն ծրագրով Արտաշատ համայնքի Իսակով փողոցի թիվ, թիվ 105, 109, 103, 101/1, 76/1, 76/2, 70/1, 68, Խանջյան փողոցի թիվ 17, Ներսիսյան փողոցի թիվ, թիվ 9, 7, 3, Արարատյան փողոցի թիվ 5, Արազի փողոցի թիվ, թիվ 1, 5, Երևանյան փողոցի թիվ,

թիվ 7, 9, Մարքսի փողոցի թիվ 5, Օգոստոսի 23 փողոց թիվ 21, Շահումյան փողոցի թիվ 14 և Վերին Արտաշատ գյուղի Արարատյան փողոցի թիվ 45 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, շինարարական աշխատանքների համաֆինանսավորման համար համայնքը հանդես գա որպես այլ ներդրող 491.800.000 /չորս հարյուր իննսունմեկ միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի 10%-ի չափով՝ 49.180.000 /քառասունինը միլիոն հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 7-Ա/

Ավագանու անդամներ

ՀԵՐՄՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ԲԱԲԱՅԱՆ

ՆԱՐԵԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱԼԲԵՐՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ

ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ՆԻԿՈԼՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՍՈՖԻԱ ՈՍԿԱՆՅԱՆ